

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 Ֆր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.


Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50 ծրար »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման սողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Է

Redaction du journal

le vounk

VARNA (Boulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Грaзунк

ВАРНА

Գրութեանը հալ չեն
ստոր

Վ Ր Ի Պ Ա Կ

Վերջին շաբաթ օրուան «ԻՐԱՆԻՆԻՔ»-ը
նշ թէ 25 այլ 24 թիւը պիտի կրէր :

ԱՋԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՈՐՈՇՄԱՆՆ ԱՌԹԻԻ

Իւզանդիոնի մէջ կարգա-
ցինք թէ Կեդր. վարչութիւնը
Պուլկարիոյ Պատր. փոխանորդ
կարգած է Տ. Յովհան Մանդա-
կունին՝ որուն պաշտօնը պիտի
ըլլայ Պուլկարիոյ Առաջնորդին
նոր ընտրութեան ձեռնարկելի
նկատելով որ նախապէս արգէն
ընտրուած օրինաւոր առաջնոր-
դը Տ. Ներսէս եպ. Ասլանեան,
ուրիշ տեղ պաշտօնի կոչուած է :
Կեդր. վարչութիւնը որոշած է
նաեւ որ առ այս առժամ խառն
ժողով մը կազմուի, որուն կրօ-
նական անդամները ինք ընտ-
րած է, և աշխարհական ան-
դամներուն համար ալ որոշել է
որ ընտրելեաց ցանկ մը ներ-
կայացուի իրեն :

Ընտրական ձեւակերպութիւն-
ները մէկտեղ առնելով առ այժմ,
առաջին հարցը որ կը ներ-
կայանայ մեզի՝ սա է թէ «Ազգ.
Պատրիարքարանը արդեօք ան-
գամ մըն ալ սխալ ճամբու մէջ
մտած չէ՞, Պատր. փոխանորդի
մը ընտրութեանն առթիւ հապ-
ճեպ և անխորհուրդ որոշում մը
տալով :

Պուլկարիա եթէ կազմակեր-
պուած թեմ մը ըլլար, իր որոշ
օրէնքներով հաստատուն կռուա-
նի վրայ դրուած, այն ատեն
կընդունինք որ շատ հեշտ պի-
տի ըլլար Առաջնորդի մը ընտ-
րութեան գործը, և մի ու և
իցէ քահանայ կարող պիտի ըլ-
լար, առանց կարգ մը բարդ
դժուարութեանց հանգիպելու,
գլուխ հանել ընտրութեան գոր-
ծը :

Դժբաղդաբար այս չէ՛ իրողու-
թիւնը : Պուլկարահայ կեդրոն-
ները միանալով առանձինն ա-
ռաջնորդական վիճակ մը կը

կազմեն, իրաւ, բայց միայն
թուղթի վրայ : գործնական հա-
յեցակէտով, իրականութեան
մէջ, Պուլկարիոյ Առաջնորդա-
կան վիճակի ու է, ու գէթ նախ-
նական, կազմակերպութիւն մը
չը կայ :

Եթէ Կեդր. վարչութիւնը՝
փոխանակ ընտրութեան վահան
վ. Յակոբեանի՝ իբրեւ Պատր. փո-
խանորդ մեզի զրկած ըլլար տը-
րամադրելի արժանաւորագոյն
եկեղեցական մը, հեղինակու-
թիւն ունեցող ու իր անհատա-
կան ինքնազգիտ հանրու-
թեան վստահութիւնը գրաւած,
այն ատեն հարելի է ենթադրել
թէ այսպիսի Պատր. փոխանորդ
մը պիտի յաջողէր նախ որոշ
չափով մը կազմակերպել առաջ
նորդական վիճակը և անմիջա-
պէս յետոյ ի գլուխ հանել
ընտրութիւնը առաջնորդի մը՝
որուն անմիջական ու գլխա-
ւոր գործը պիտի ըլլար վերջ-
նական կազմապարտ տալ ծրագրը :
Եւ կազմակերպութեան՝ Ազգ.
Ընդհ. ժողովի մը օժանդակու-
թեամբ, ու որոշմամբ :

Ազգ. վարչութիւնը առաջին
սխալ մը գործեց, առանց կան-
խաւ բոլոր հայաբնակ կեդրոն-
ներուն կարծիքն առնելու, Պուլ-
կարիա զրկելով վահան վարդա-
պետը :

Միւս կողմէ՝ եթէ մենք
Առաջնորդի մը պէտքը անհը-
րաժեշտ դատէինք, հարկ էր
որ, առանց ինքզինքնիս վե-
ղարաւորի մը նախաձեռնու-
թեան ենթարկելու, առանց
ինքզինքնիս հոգեւոր իշխանու-
թեան մը խնամակալութեան
ներքեւ դնելու՝ մենք, Պուլկա-
րահայերս, նախաձեռնութիւնն
ունենայինք Ընդհ. ժողով մը
կազմելու, խորհրդակցելու հա-
մար իրերու վիճակին վրայ,
ծրագրելու, որոշելու համար, իր
ամենէն պարզ և ընդհանուր
գծերուն մէջ զոնէ, մեր Ազգ.-
հաւաքական գործերը վարե-
լու յարմարագոյն եղանակ մը,
և զիրար հասկնալէ ու մեր
պահանջումին գիտակցութիւնն

ունենալէ վերջը միայն գիմէինք
Կեդր. վարչութեան որ, այս պա-
րագային, պիտի կրնար ինքն
ալ իր կարգին, գիտակցաբար
շարժիլ ու տնօրինել :

Երբ մենք այս անհրաժեշտ
նախապատրաստութիւնները չու-
նեցանք, որունն է յանցանքը
եթէ Պուլկարահայք այսօր ա-
ռաջնորդ մը չունին : Անոնք որ
զրկուած Պատր. փոխանորդին
հոգեբանութիւնը կրցին ընել՝
անոնք, ընտրութեան կատա-
րումին յաջորդ օրն իսկ, ա-
ռանց ինքնախաբուծեան, կըր-
ցին դուշակել թէ՛ ընտրուած
առաջնորդը, ըլլար Ասլանեան
Սրբազանը կամ ուրիշ մը, Պուլ-
կարիա ոտք կոխելիք չունէր :

Տրուած պայմաններու մէջ,
ուրեմն, դժուար չէ գուշակելը
թէ՛ Պուլկարիոյ Առաջնորդին
ընտրութեանն համար Կեդր.
վարչութեան ընդգրկած այս
վերջին ուղղութիւնն ալ անհե-
տեանք պիտի մնայ, և Պուլկա-
րահայք կրկին չպիտի կրնան
ունենալ իրենց առաջնորդը, ոչ
միայն որովհետեւ ընտրութեան
ձեռնարկելու համար ընդուն-
ւած ձեւը սխալ է և քաջքշուկ
ընդթ մը ունի, այլ և անոր
համար որ Տ. Յովհան Մանդա-
կունի յարմարագոյն անձը չէ՝
որուն կարելի ըլլար յանձնել
Պուլկարիոյ Առաջնորդին ընտ-
րութեան գործը : Ի՛նչ յարգելի
արժանիքներ ալ ունենայ այս
կրօնականը, տարբեր տեսակէտ-
ներով, մենք համարձակօրէն, ա-
ռանց կանխակալ կարծիքի, և
առանց մտքերը նախապաշարե-
լու վախն ունենալու, կը յայ-
տարարենք որ չպիտի կրնայ ա-
նիկա օգտակար ըլլալ իր կոչ-
ւած պաշտօնին մէջ : Նախանձը,
անձնական ատելութիւնները,
ասոր անոր ունեցած հին ու նոր
հաշիւները պիտի կաշկանդեն
զինքը և իր գործունէութիւնը :

Հայ հասարակութիւնը քաղա-
քայիական դաստիարակութենէ
զուրկ է : Մեր անհատական հա-
կառակութիւնները ու մեր
անձնական ատելութիւնները

վարժուած ենք, ոճրագործ ան-
հոգութեամբ, փոխադրելու հան-
րային գործունէութեանց կրօ-
նանին շուրջը :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Գերմանիոյ վիլհելմ Բ. կայսեր
Միջերկրականի մէջ օկտած ճամ-
բորդութիւնը Ֆրանսացոց մտքերը
չափէն աւելի յուզեց, և այսր թան-
ճէր հանդիպեցաւ և ըստ պատշա-
ճի հոն արքայազայի ընդունելու-
թիւն մը գտաւ Մարքի Սուլթան-
նի. պայառակաւ ներու. և կատա-
վարութեան ներկայացուցիչներուն
կողմէ : Մինչ ֆրանսական կռո-
ւարութիւնը իր աճերակամ առ-
մանադիւնն և արիւնքան ստաց-
ւած քննուրն ապահովութեանը հա-
մար կարգ մը պահանջներ կր բեռ-
ցնէր Մարքի Սուլթանին ուսերուն,
գերման կայսրը այս անպատեհ
վայրկեանը ընտեց իր զէպ այդ
կողմ ճամբորդութեան համար, ինչ
որ բնականապէս կասկածներ յա-
րուց ֆրանսացոց մտքերուն մէջ :
Երկու կողմի թելթելը և տաք-
զլուի երեսփոխանները հրապարակը
այն աստիճան ազուկներով լեցու-
ցին որ պահ մը կարծեցեալ թէ
ֆրանսո գերման պատերազմի մը
նախնդորին մէջ կը պատուէր, և
ըսողներ խի կըզան թէ Ռուսիոյ
ներկայ ջախջախեալ վիճակն Գեր-
մանիա օգտուիլ ուղեւով, Ֆրան-
սայի հետ պատերազմի բռնուելու
ատիկներ կորնէ, և պատերազմը
անխուսափելի կը թուի ևւայն :
Բայց բարեբաղդաբար իրաց ընթաց-
քը այդ աստիճան ծանր վիճակ
մը ոտանալէ հետո է այսօր, և
Գերմանիա կը յայտայտ է թէ իր
վեհապետին բաղձանքը ուրիշ բան
չէ Մարքի նկատմամբ բայց եթէ
Գերման նաեւրու աղաւտ երթեւեկը
ապահովել մարտեան եզերքներուն
վրայ, հետեւաբար Ֆրանսա ըստ ա-
մենայնի պատ կը ձգուի, անգո
ֆրանս համաձայնութեան համեմատ,
իր քաղաքական խնդիրները կար-
գադրելու Մարքի Սուլթանին հետ,
բաւական է որ ատկէ գերմանու-
կան նաւարկութիւնը ևւ առեւտուրը
չը վստահուի :

Կրէտէն գեռ յուզեալ ևւ այն-
կոծեալ վիճակ մը ունի : ապրս-
տամբները կը պնդեն կղզին Յու-

նաստանի հետ միացնելու. զաղա-
փարին վրայ : Իշխան Եօրիկին խնդ-
րանքը ու թախանձանքը՝ որ անոնք
իրենց զենքերը վար դնեն՝ անը-
սելի կը մնան : Կրէտէի եզերքն
ըր գտնուող այն օտար նաւերը
որ կղզիին ապահովութեանը հա-
մար միայն հոն կը սպասէին ան-
գործ, այսօր լուռն գործունէա-
լիքն ունէր : Եւ, հոս հոն կը վազեն
իրենց նաւատորներով, ապստամբ-
ներ կը հայածնեն, կը ձերբակալեն
ու կը տեղափոխեն : Կղզիին խը-
նամակալ չորս պետութիւնները հա-
մերայիս ըլլալ կը թուին հոն
պարսի ֆոն պահպանելու համար :
Փրանսացի, Անգլիացի զինուորներ
խալապի սպայի մը հրամանին
տակ զէնք գործածեցին ապստամբ-
ներուն եւ նոյն իսկ տեղացի ժո-
ղովուրդին դէմ, երբ ասոնք օստի-
կաններու խումբեր պաշարած էին
տեղական կառավարութիւնը ձեռք
առնելու եւ յունական զօրք կանգ-
նելու համար : Արդէն կղզիին ներ-
սերը շատ տեղեր կրէտական զօ-
ւակները վար առնուած եւ յունա-
կանները բարձրացած են :

Այս միջոցիս մակեդոնական յու-
զուները եւս ծայր աստիճանի հասած
են : Յունական խումբեր մոնկոլա-
կան վայրագութիւններ կը գործեն
պուլկար եւ գուցօ-վալաք գիւղե-
րու վրայ եւ Յոյները այս կրնեն
թիւրք իշխանութեանց թոյլտուու-
թեամբ եւ աջակցութեամբ :

Իսկ մը չարախ առաջ 7-8
Գուցօ-վալաքներու յոյն խումբի մը
կողմէ սպաննուիլը եւ ուրիշներու
խոշտանքուիլը ատիկի առիթն որ
Ռուսները մէջ հակայոյն ցոյցեր
եւ միթիւններ տեղի ունենան,
եւ այդ ցոյցերը մեծ ծաւալ պի-
տի ստանային եթէ Պուզըշի թուրք
զեկապետները չը փութար ապա-
հովիշ խոստումներ ընել ոտմէն
կառավարութեան :

Անցեալ օր Գաթիսի գաւառին
Ջաքարիքէն գիւղին մէջ 200 ի չափ
զինեալ Յոյներէ բաղկացեալ մեծ
խումբի մը կողմէ 60 պուլկար ըս-
պաննուած եւ 7 վերաւորուած ըլ-
լալու լուրը Պուլկարի մէջ մըտ-
քեքը տակն ու վրայ ըրաւ, եւ ի-
րաւամբ, որովհետեւ այդ վայրա-
գութեան լուրը պաշտօնապէս հաս-
տատուած է աւստրական եւ ռու-
սական հիւպատոսներուն քննու-
թեամբը : Եւ մարդ առանց Պուլ-
կար ըլլալու ալ, չէ կարող իր
գոյրը զսպել երբ իմանայ թէ
այդ հայրենասիրական զինակին տակ
սքողուած յունական խումբը իր
գոհներուն մէջ մեծ մասը պուլկար
կիներէ եւ փոքրիկներէ ընտրած է :
Ահա այս վանտալական վայրագու-
թիւնն էր որ չափէ զորս յու-
զեց Պուլկարի ժողովուրդը եւ
հակայոյն միթիւններու նոր չըջան
մը բացաւ : Կիրակի առաւօտ քա-
ղաքին մէջ տեղի ունեցող միթիւ-
նին ատենարանները, Տ. Տ. Բէթը
Տրակուլիլ եւ Տաթիան Բէթիլիկով
ազգայնական զգացումէ աւելի մար-
դասիրական զգացումներու կոչ կը
ընէին եւ կը յարձակէին յունա-
կան մոլեռանդութեան դէմ որ ի-
րենց մոռցնել կուտայ ստէպ մարդ-
կային եւ քրիստոնէական տարրու
կան զգացումները :

Վերջապէս քանի որ ցեղային
հակառակութիւնը Մակեդոնիոյ մէջ
այս աստիճաններուն հասաւ եւ քանի
որ թիւրք կառավարութեանը, իր

գոյութիւնը քաջաշելու համար, զայն
հրահարելու եւ գերազգահելու քա-
ղաքականութեան մէջ կը յարատեւէ,
չէ կարելի այլեւս այդ երկրին
մէջ խաղաղութիւնը վերահաստատել
ներկայ վարչական զրուծեամբ. եւ
կը կարծենք գիտնալ թէ մօտ է այն
օրը որ եւրոպական թուրքոյ այդ
քանի մը նահանգները ինչպէս ե-
լուտական հակակշիռ նոյնպէս եւ
վարչական հիմնական բարենորոգ-
մանց ենթակուին, տարբեր Մուր-
տըսէքի ճրագրէն որ ցարդ հա-
կառակ արդիւնք տուաւ :

ՏԱՐՈՆՈՅ ԵՒ ՕԱՄՆՈՅ ԿԱՐՈՏԵԼՈՅ

Ինչպէս ծանօթ է, ըստ ռուս կառավա-
րութեան հրամանին, 1902 ին շատ մը
գաղթական հայեր ռուս-թուրք սահ-
մանագիծերը խնդած էին հայրե-
նիք վերադառնալու համար : Յանձ-
նախուժքս յիշեալ գաղթականներու
թշուառութիւնը ըստ կարի մտքե-
լու նպատակաւ սկսաւ հանգանա-
կութիւն մը լինել : Թէ այդ հան-
գանակութիւնէն եւ թէ թատերա-
կան ներկայացումէ մը գոյացաւ
1020 ֆրանք : Յանձնախուժքս յիշ-
եալ գումարն ըստ հրամանի Տ. Տ.
Վեհափառ Մկրտիչ Կաթողիկոսի զը-
կած էր Կարսի Ս. Առաքնորդին : Բայց
գումարին մինչեւ կարս ժամանելը
արդէն գաղթականաց խնդիրը վեր-
ջացած էր. ուստի Տ. Տ. Վեհ Կա-
թողիկոսը սոյն գումարն Յանձնա-
խուժքս վերադարձնել տուած եւ հը-
րամայած էր զայն ապահով տեղ մը
պահել. ապագային բարի նպատակի մը
գործածելու համար :

Յանձնախուժքս ի նկատի ունենալով
Տարոնոյ արկածեալ վիճակը, յարմար
տեսաւ սոյն գումարն յիշեալ թշու-
առ ազգայնոց յատկացնել :
Ուստի գումարն տրուեց ի հան-
գերձ գրամատուէն առնելով 1091
ֆրանքը, Մարտ 19 ին Պատրիարքա-
րան զրկեց յիշեալ կարօտեալ հասցե-
ներու նպատակաւ եւ Պատրիարքա-
րանէն ստացաւ հետեւեալ պաշտօ-
նական գրութիւնը զոր հարկ դա-
տեց հրատարակութեան տալ ի գի-
տութիւն եւ ապահովութիւն հան-
գանակութեան մասնակցող պատ. ազ-
գայնոց :

Մնամք Յարգանք
Ի Դիմաց հողատար Յանձնախուժքի
Ատենադպիր Ատենապետ
Յ. Կ. Ճակիլիեան Ե. Գ. Բեւսանեան
Գ. Սահարճեան

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ԶԱՅՈՑ
Համար 769
1905 Մարտ 26
Կ. Պոլիս
Պատուարժան
Հոգատար Յանձնախուժք
Վառնայի

Ամսոյս 19 թուականաւ Ձեր գրոյն
հետ կուղարկէիք մեզ 1091 ֆրանքի
փոխանակադիր մը ծանուցանելով
որ այս գումարն հանգանակուած է
ժամանակին ձեր նախաձեռնութեամբ
Ռուսիայէն իրենց հայրենիքն գաղ-
թող մերադնէից ի նպատակ, բայց իր
նպատակն սահմանուած չլինելով կը
փափաքէր յատկացնել Տարոնոյ կա-
րօտեալ պէտքերուն :

Ձեր զեկուցման համաձայն գան-
ձուած լինելով արդէն այս փոխա-
նակագրին արժէքն պիտի սահմա-

նենք նպատակ անվերջ իր նպատա-
կին : Եւ կը փութանք մեր շնոր-
հակալիքն յայտնել ձեզ հոգածութեան
համար, զոր ցոյց տուած էք այս
գործող արկածեալ մասին, որոնք
կարօտ են արդարեւ ամէն բարե-
սէր անձանց ձեռնառութեան :

Մնամք Աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ՄԱՂԱՔԻՍ ԱՐԲԵՊ.

ՊԱՏԵՐԱԶՍԸ

ԹԵՆԱՄԻ ՏՈՐՄԻՆԵՐԸ

Ամբողջ 14 ամիսներ բոլոր աշ-
խարհի ուշադրութիւնը նախ Բօրթ
Արթուր, եւ ապա Մուքթէն իրենց վը-
րայ սեւեռել տալէ յետոյ, եւ անոնց
աղետալի հոգեվարքը հեւ ի հեւ զիտե-
լէ վերջ, հիմա ալ ամեն մարդու ազ-
նարկը մի ուրիշ կողմ դարձած է. այ-
սօրուան հայցադէպը Մանչուրիա-
յէն հեռու, բաց ծովու եւ անագին ու-
կրանի վրայ է ուր պիտի լինի ծո-
վամարտերու ամենէն կատաղին, ամե-
նէն բարձրագոյնը, որ երբէք ճանչ-
ցած ըլլալ պատմութիւնը, հանդիսա-
ստելի մը պաղարկումներով զիտելու
եւ ծափելու յաղթողը, հոգ չէ թէ այդ
չափ տուրի նստած ըլլալ մէկ կամ
միւս կողմին, հոգ չէ թէ ան գնուած
ըլլալ հազարաւոր ազնիւ կենսաբերու
արիւնովը, նոյնպէս նրեթական անոն-
ի կորուստովը :

Անշուշտ ընթերցողը կը գուշակէ թէ
խօսքը Պաթիկեան նաւատորմին վը-
րայ է : Սկիզբէն արդէն Պաթիկեան
նաւատորմը իւր վրայ շատ խօսեցը-
նել տուաւ. անցեալ տարիէն իսկ ա-
տոր ուղեւորութեան մասին այդչափ
հակասական լուրեր արձակուած էին
որ այլեւս անոր մեկնումը պարզապէս
Ռուսոյ ծովային զօրութեան տկարու-
թիւնը երեւան պիտի բերէր. բայց
ձառնցիկներու Մանչուրիոյ մէջ յա-
ջողութիւնները կտակած չէին տար
այլեւս որ, մօտ ժամանակէն անոնք
պիտի ձեռնարկէին Սախալինը գրաւե-
լու եւ Վլադիվոսթօքը պաշարելու, ո-
րոնք Ռուսիոյ Մայր. Արեւելքի յենա-
կէտներն էին :

Ատոնց կորուստովը Ռուսիան ընդ
միշտ կը պարփակուէր իւր մի դար ա-
ռաջուց ունեցած սահմաններուն մէջ :
Այս ամենը պարտ կը դնէին Ռուսիոյ
վրայ նաւատորմը զրկել հոն ուր ե-
թէ իր վրայ տրուած յոյսերը չ'իրակա-
ցնէ իսկ, զոնէ ան կը յապաղեցնէր
թշնամիին նպատակներուն իրագոր-
ծումը :

Այսպէս պարագաներու ճնշման տակ
մեկնող նաւատորմը եւ ոչ մի լաւ բան
կը խոստանար, եւ արդէն զեռ եւրո-
պական ջուրերու մէջ ռուս ծովակալը
Հըլլի առջեւ՝ Անգլիական ձկնորսանա-
ւախումբը ձառնական թորելներ կար-
ծելով՝ ենթակայ կրնէր իր ռուսներուն.
սակայն հետեւանք շատ անհաճոյ քա-
ղաքագիտական խոշնդոտներու բաղ-
խեց Ռուսիան :

Այս առաջին նաւաբաժինն էր որուն
ետեւէն երկրորդ, երրորդ եւ չորրորդ
նաւաբաժիններն ալ կազմուելէ յե-
տոյ, ուղեւորեցան դէպի Մայր. Ա-
րեւելք :

Առաջին օրէն իսկ ամէն մարդու
հարցումն էր թէ այս նաւատորմը
ունէ՞ր յայտնի առաւելութիւններ
ձառնական տորմիդին վրայ, եւ պի-
տի կրնա՞ր վճռական հարուած մը
տալու թշնամիին ծովու վրայ, որ-

պէսզի ցամաքէն եղած կորուստնե-
րը փոխարինէր ծովային փառաւոր
յաղթութեամբ մը :

Այս հարցման եւ ոչ մի զրական
պատասխան կարելի է տալ. վառնդի
եւ ոչ մի զօրավար յաղթութիւնը
իւր սուրին կրցած է գերի ընել. եւ ա-
մէն մի ըննադատի կարծիքը աւելի
պէտք է ընդունել իր իւր անձնական
բաղձանքը քան անկողմնակալ հայեաց-
քի մը արդիւնք : Հոս կը ներկայա-
ցնենք երկու կողմի ծովային զօրու-
թեանց քանակը եւ որակը, եւ կար-
ծեմ այսօր աւելի առաւելութիւն կրն-
ձեռնէ վերջինը որ կողմին որ, կը
պատկանի ան :

Ռուսական նաւատորմին Ա. նաւա-
բաժինը կը բաղկանայ հետեւեալ ծո-
վային ուժերէն. ծովակալ Ռոստիսլա-
վէնսքիի հրամանատարութեան տակ
«Սուվորով» «Պորոսին» «Ալեքսանար
Գրդ.» «Օրէլ» եւ «Օսլապլա» զը-
րահաւորներէ, «Տիմիրիյ Տօւսքի»
«Նահիմով» «Ալբորա» «Գորնիով»
«Գամշով» եւ «Անատիր» յաճառ-
րակներէ, նոյնպէս փոխադրութեան,
ածուխի, հիւանդանոցի եւ այլն շո-
գենաւերէ :

Բ. նաւաբաժինը ծովակալ Ֆէօլ-
քէրցովի հրամանատարութեան տակ,
«Սիւոյ Վէլիքի» «Նաւարին» զրահա-
ւորներէն, «Սվիթլանայ» «Ալմազ» եւ
«Ժէմուկ» յաճառարաններէ. «Պէ-
զդարաշի» «Պատրի» «Պիզդարէշի»
«Պետով» «Պրաւի» «Պիսգրի» թոր-
բիւհալաւաններէ կը բաղկանայ :

Գ. նաւաբաժինը ծովակալ Էն-
քիսի հրամանատարութեան տակ, կը
բաղկանայ, «Օլէկ» «Իվանով» «Տը-
նէբր» եւ «Ռիօն» յաճառարաններէ.
«Կրոզի» «Կրօմբի» «Բէզվի» «Բիօ-
սիթիլի» թորբիւհալաններէ եւ 6 թօթ-
բիւհալաններէ :

Դ. նաւաբաժինը ծովակալ Նէպո-
կալովի հրամանատարութեան տակ
կը բաղկանայ, «Նիքօլ» Ա. եւ «Վլա-
տիմիր Մոնօմա» հին զրահաւորներէ,
«Արաքի» «Սինեալին» «Ուշաքով»
եղիւրապաշտպաններէ եւ 8 թորբիւ-
հալաններէ :

Իսկ ձառնական ծովային զօրու-
թիւնը հետեւեալն է : «Միքալ»
«Ասակի» «Շիքիլմա» եւ «Վոլով»
զրահաւորներ «Երիշին» «Գաւուկայ»
«Իզուով» «Ասամայ» «Իվաթէ» «Թօ-
քիլա» «Նաքուս» եւ «Ատոմուայ»
զրահապատ յաճառարաններ, Գամի-
մուրա ծովակալի հրամանատարութեան
տակ. նոյնպէս «Չիթով» «Գաւակի»
«Թաքապալայ» «Նանիլա» «Չաքապու-
քով» զրահապատ յաճառարաններ, ծո-
վակալ Տէվլայի հրամանատարութեան տակ,
եւ ուրիշ բազմաթիւ արագընթաց
յաճառարաններ 20 վորձուած հակա-
թորբիւհալան եւ 30 թորբիւհա-
ւաններէ :

Ռուսական զրահաւորները բախ-
դատմամբ ձառնականին թեպէտեւ
թուով աւելի (11) բայց մեծաւ
մասամբ հին են. իսկ ձառնական
4 զրահաւորները առաջնակարգներն
են, իսկ առաջին երկուքը ամբողջ
պիստիկ մէջ նման չունեն :

Եւ այսօր այս երկու հակալ ուժերը ի-
րարու դէմ յանդիման կը գտնուին.
վերջին ռուսները ցոյց կուտան որ
Ռոստիսլովի նաւաբաժինը որ
քանի մը ամիսներէ ի վեր Մատա-
կասկարի ջուրերը կը գտնուէր,
մարտի սկիզբները թողած է կղզին,
եւ նոյն ամսոյ 26 ին անցած է Հնդ-
կական ովկիանոսը եւ մտած է Մալա-
զայի նեղուցը, Սինկաբուրի բացերէն
անցած է իսկ այսօր Չինական ձո-
վին մէջ գտնուի : Ծովակալի նպա-

տակի մասին ինչ որ ալ ըսուի կանխահաւ է. այնչափ երկար ճամբորդութենէ յետոյ անշուշտ պատեւաբար մեծ աւելի հանգստութեան եւ նորոգութեան պէտք ունի, եւ արդէն ճամբաներու ամենէն վտանգաւորը ընտրելէն կը հետեցուի թէ հոն մօտը ֆրանսական տիրապետութեան տակ եղող Սայկոն եւ կամ Սիւսի ծովախորշը պիտի ապաստանի, հոն սպասելով միւս նաւաբաժիններու հասնելուն, եւ կամ ճեղքելով Թօկոյի գօրութեան շրջման պիտի շարունակէ իւր ճամբան գէպի Վլատիմիրով, իսկ անշուշտութեան պարագային՝ ուստական յաղթութեան վերջին յոյսը պիտի իջեցնէ իրեն հետ խաղաղական անգունը:

Յ. Ն.

ԴԱՍՏԻԱՐԱԿ ՈՒԹԻՒՆ

Անգլիացի 85 նշանաւոր գէմբրուստորագրութեամբ բոլոր կրթական մարմիններուն ուղղուած շրջաբերականի մը մէջ գաստիարակութեան գործին համար հետեւեալ թելադրութիւնները գծուած են, որոնք կրնան դաս մը ըլլալ մեր կրթական գործին զբաղողներուն եւս.

Ա.—Ընթերցանութեան գրքերը վարժի բարձր բարձր գաղափարները պաշտպանող նիւթեր պարունակելու են, զորոքինակ հերոսական արարքներու, անձնութեան, եւ պարկեշտութեան պատմութիւններ, որոնք ուսուցչին աւելի տան նկարագրի արժէքը սովորեցնելու:

Բ.—Ամենէն ազնիւ յուզումները գրգռող երգերը քաջալերելի զի երգը պզտիկներուն նկարագրի կազմելու կը սատարէ:

Գ.—Հերոսական արարքներ

ներկայացնող պատկերներ կախել պատերուն վրայ:

Դ.—Աշակերտներուն ուշադրութիւնը հրաւիրելու առողջական օրէնքներու եւ ֆիզիստոնէական վարմունքի վրայ, որոնցմով անժուժկալութեան խաղաժողովութեան և ազգային նկարագրի խաթարող ուրիշ մոլութիւններու վնասները և չարիքները կրնան մատնանիլ ըլլալ:

Ե.—Ուսուցիչները տղայոց խաղերուն հակելով կրնան ներկարագրի արիւթիւնը, անձնագաղաթնութիւնը և արդարասիրութիւնը զարգացնել անոնց մէջ:

Զ.—Նախկին դպրոցականներուն միջեւ ընկերակցութեան մը կազմութիւնը կը մշակէ հաւատարմութիւնը գէպի դպրոցը եւ համերաշխութեան օգտակար ոգի:

ԱԶԳԱՅԻՆ

Դեր. Տ. Եղնիկ եպ. Ապահունի որուն Կ. Պօլսէն փախած ըլլալը հաղորդած էինք, Ազգաբնակչութեան և հոն քանի մը օր մնալէն յետոյ Գահիրէ գացեր է: Ն. Սրբազանութիւնը կը շնորհաւորենք իր փախուստի ծրագրի մը անվտանգ յաջողութեամբ ըլլալուն առթիւ:

—Զմիւռնիսէ կը գրեն թէ Պէրկալայէն բարեսիրտ ազգային մը խոստացած է առեւտրական վարժարան մը հիմնել Զմիւռնիոյ մէջ, 5000 լիւրա ծախսելով: Այս նոր բարերարը առ այժմ իր անունը հրապարակաւ յայտնել չուզեր:

—Տ. Սահակ արք. Այվատեանի Եգիպտոսի առաջնորդ ըլլալուն վեհ. Կաթողիկոսը թէ և հաւա

նութիւն տուեր է, բայց թուրք կառավարութեան կողմէ դժուարութիւններ յարուցուելուն պատճառաւ, Գահիրէի Ընդհ. ժողովոյ դիւանը նոր ընտրութիւն կատարելու պէտքը զգացեր է: Եւ մինչեւ առաջնորդի ընտրութիւնը տեղական կառավարութեան մօտ պաշտօնական ներկայացուցիչ մը ունենալու համար՝ նոյն ժողովը որոշեր է խնդրել Պատրիարքարանէն որ առաջ. փոխանորդ Տ. Յակոբ քահանայ Յարութիւնեանի Պէրաքը հանել տայ ու ղրկէ:

Այս լուրէն կը հասկցուի թէ եգիպտական կառավարութիւնը առանց Բ. գրան Պէրաքին Հայոց առաջնորդը պաշտօնապէս չը ճանչնար, եւ հետեւաբար Եգիպտահայք պարտաւոր են անպատճառ թուրքին սիրած մէկ եկեղեցականը իրենց առաջնորդ կամ փոխանորդ ունենալ: Այս անտանելի է. պէտք է ասոր դարմանը գտնել:

—Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը Սիւսի մէջ բաղնիք մը շինել տուեր է 900 ոսկի ծախսելով. այս բաղնիքը տարեկան 30 ոսկի հասոյթ պիտի բերէ վանքին: ԿՈՉՆԱԿԻ մէջ կը կարգանք թէ Ուսգի հայ ճաշարանի մը մէջ քանի մը Հայեր ծխելու կամ չծխելու վէճ մը յարուցած և զիրար վիրաւորած են. ասոնցմէ մէկին ձախ թեւին արեան անօթները և մկանները վտանգաւոր կերպով կտրուեր են:

«Ազատ Բեմ»-ի մէջ հետեւեալը կը կարգանք.

«Կը լսենք թէ եգիպտական կառավարութիւնը իմանալով վսեմ Պօղոս փաշա Նուպարի բարձրա-

գոյն առեւտրական վարժարան մը հաստատելու խորհուրդը, դիմած է Նորին Վսեմութեան եւ առաջարկած է որ սոյն վարժարանին մէջ ընդունուին կառավարական դպրոցներէ տասը աշակերտ: Եգիպտական կառավարութիւնը ի փոխարէն իր բարձրագոյն դպրոցներուն մէջ պիտի ընդունի տասը հայ աշակերտներ ձրիաբար:

«Կը լսենք նաեւ որ կառավարութիւնը Առեւտրական վարժարանի համար պէտք եղած հողը մտադիր է նուիրել, որով վսեմ Պօղոս փաշայի հողի գընման համար սահմանած գումարը կարելի պիտի ըլլայ աւելցնել վարժարանի եկամուտին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Գողթան» Երկ. Երգ. Խումբիս Ի նպատ Սասնոյ արկածեալներու տուած ներկայացումէն զուտ հասոյթ գոյացած է 33 օսմանեան ոսկի որ ուղարկուած է Պատրիարք հօր տեղացի վաճառականի մը ձեռքով, իր նպատակին հասցնելու համար:

Պուրա վերոյիշեալ հասոյթէն 20 առ հարիւր տուած է:

Վարչութիւն

«Գողթան» Երկ. Երգ. Խմբի 28 մարտ 1905

Վառնա

ԱՇԱԿԵՐՏ ԿԻ ՓՆՏՈՒԻ

Քաղաքիս մէջ հայ վաճառատան մը համար 13-14 տարեկան աշակերտ մը կը փնտռուի: Եթէ շահեկան բարքը ու վարքը վստահութիւն ներշնչէ, վաճառականը մտադիր է զանի դիւնները իր տանը մէջ պահել ու կերակրել:

Դիմել խմբագրութեանս

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

21

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

(Շար. Աստուծոյ քիւն)

Ե

Այս տեսակցութենէն քանի մը ամիս վերջը Էվգաֆի պաշտօնատունը իբր մանչիլ զբաւեց եւ և վաճառեց Ղալաթիոյ Լուսաւորիչ եկեղեցին 1500 ոսկի արժողութեամբ մէկ կալուածը, որ արձանագրուած էր Լուսաւորիչ անունը: «Գրեգոր որդի Անակայ»:

—Աս Գրեգոր վիճի Անակը քանի հարիւր տարի կ'ապրի հարցուցին Էվգաֆէն, որուն մատնութիւն եղած էր:

Էֆէնտին չոգենաւին մէջ «Արեւելք»-ի արտօնատիրոջ հանդիպելուն, զայրոյթով ըսաւ.

—Հիմակ տես՞ք թէ ինչ կ'ըլլայ եղբի: Ասանկ երթանք մեր եկեղեցիներուն բոլոր կալուածները պիտի առնեն: Վայ քեզ քաղաք, որոյ յոգեբաւ ճիւղ մանուկ է: Մենք կարաս մը գտէք, մենք կարաս մը:

Շոգենաւին Պէշիկթաշէն գէպի Օրթոգիւ եկած ատեն, երբեմն կը պատահէր որ բարձրաստիճան թիւրքեր իրեն հարցնէին. թէ որոնց կը պատկանէին այն գեղեցիկ տունները, որոնք Զրադանի

սուրբանական պալատին ետեւը գտնուող բլրան վրայ սկսած էին շինուիլ: Հայրապետ Էֆէնտին չգիտնալ ձեռնադրելով, տարակուսական պատասխաններ կուտար. «Պանգային մարդոցն են. կարծեմ ֆրէնկներու են» կըսէր. կը կմկար «ֆրէնկներու են» արտասանած ատենը: Սեփականատէրերը թէ և Պանգ Օթոմանի պաշտօնեաներ կամ վաճառականներ, բայց հայեր էին:

Ինքն ալ իր բնակարանը շատ մէկուսացեալ տեղ մը՝ Տէրէ կոչուած ձորին մէջ՝ շինել տրւած էր: Դրսէն երկայն որմ մը կը շրջապատէր պարտէզ մը, ուր կը գտնուէր տունը: Առանց արտաքին ուշադրաւ երեւոյթի չէ՞ք մը, երկու մասի բաժնուած՝ հարկմըք եւ սեխմըք: Այս վերջինը՝ յատկապէս թիւրք այցելուներու ընդունելութեանը սահմանուած՝ պարզուկ եւ կահաւորեալ էր, Էֆէնտին շատ անգամ կը յիշեցնէր սուլթան Մահմուտին այցելութիւնը Ղազէզ Արթինին: Համբաւաւոր ամիրան ծանր հիւանդ պատկած, սուլթանը, ծպտեալ, Օրթոգիւ հիւանդ տեւի կուգայ անոր տունը: Սանդուխներէն վեր ելած ատենը կը մտնէ սենեակները, որոնց անշուք կահաւորութեամբ իր ուշադրութիւնը կը գրաւէ: Այս քննական այցելութենէն յետոյ, Սուլթանին համարումն ու վստահութիւնը զազէզին վրայ եւս առաւել կ'աւելնայ:

Էֆէնտին վաթսուներ անցուկ էր: Տղայուծ թեւերը կարգաւ գրել մը սորված էր, բայց ընթերցասէր ըլլալուն շատ բան կը կարդար:

Ամէն հին հայու պէս ինքն ալ գրաբարին իմաստը քիչ չատ կը հասկնար, ակնշը պզտիկուց ի վեր եկեղեցական գրաբարով լիցուած ըլլալուն: Զամբանը մաշեցուցած էր, ինչպէս եւ Եղիշէն, Թոմա Արծրունին: Աստուածաշունչը եւ ուրիշ պատմական գրքեր: Տեղեակ էր եւ ժամանակակից թարգմանութեանց. իզմիրի ու Պոլսոյ վիպական բոլոր թարգմանութիւնները իրեն ընտանի էին: Պոլսոյ բոլոր թերթերուն բաժանորդ էր, եւ միանգամայն ընթերցող:

Հայաստանէն եկած Լուսաւորագործի մը այդ տղան, իր բաղդը իրիւի պատեւազմին սկսած էր շինել: Ետքէն Սէրասկէրի, Թօփհանէի, Թերսանէի գլխաւոր հայթայթիչներէն մէկն էր եղած: Աւելի ճիշդ պիտի ըլլար «առաջինը» ըսել: Փաշաներու եւ պաշտօնատարներու գողակից ըլլալու հնարամտութեան մէջ անբաղդատելի ճարպիկ մըն էր: Շնորհիւ այդ անբարեխաղճութեանը, որ թիւրքերոյ վարչական բարքերուն մէջ գերագոյն առաքնութիւնն կը համարուէր, Հայրապետը ո՛չ միայն մեծկակ հարստութիւն գիշած էր, այլեւ՝ աստիճանէ աստիճան բարձրանալով հասած էր պալատի, եւ ակնկառող կը մնար փաշայութեան:

(Շարունակելի)

Ի Խ Թ Ա Դ

Քեօյլերուէ պոլլոնան ապօնէլէրի-
միւ Ս. Չափիկ միւնասիպիթի իւլե
րուանի պօրճարընը էտա իթմէք
իչիւն չէնիլէրէ Էնէճէքլէրի մայիւս
օլմալլէ, կալէթա պօրճարընը տաթի
դիւթի իսիլլէրի մաճարընը պօրճա-
կալարընը Էօսէլլէրի ունոթմաւա-
լը տրրլըր :

Տօպրիլտէ Մ. Սիսակեան (ֆօթօկրաֆ)
Սիսակեան Մ. Սիսակեան (տարրաֆ)
Շուրուտա Մ. Յ. Քիօսէան
Քիօսէան Մ. Սիսակ Մէլիքեան

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Բ Ք Ի Ա

Պրանսիոյ Էլիսիոնի շէտիտէն
խոտաւոր իւզէրիւնէ Սուլթան
Էնէնի պիւր իրաւէ իւլէ Պրանսա-
նըն պիւթիւն թալէպ ու թէք-
լիթլէրիւն թէմալէն դապուլ ի-
տուպ ինքաւընը էմր ու Նէվալէ
իթաթի :

—Մաքէթանիտա գօմիթալար
վէ ապէրէր պէյնիւնէ կէշէն
կիւն վազու պուլան գալկա ազ-
շաւա գաւաթ տէվալ իթմիշ
տիւր : Ապրէրէրտէն 4 քիշի վէ
3 տիթ թէլէթ օլմու : գօմիթա-
ճըլարըն թէլէթիւթը մէճնուլ :

—Կաթթօրիա գաղաւթնա Ջա-
քօրիքէն քէօյլէն 200 քիշիտէն
իպարէթ պիւր Ռուս չէթաւը կի-
տուպ պուլարընը դաթլ իտէր,
գըլթիթաթ Էշեալարը վէ մէթ-
քիւլաթը ալարգաւա մաւաթ
պիւնալարտան խոյլընը տաթի
Էադար : Իշգու տէճէթլի ճիւնա-
յէթիւն տալլալմաթը իւզէրիւնէ
րուս վէ աւաթիա գօնոթուլարը
վէ միւլթիյէ աճէնթիւթի ժան-
տարմա ալալը իւլէ վազուաթ
մաճէլիւն չէթապան օլուրլար
վէ ինքաթ թաճիգաթ իտէրէք
200 քիշիլէք պիւր Ռուս չէթա-
ւընըն հիւճուլընը, պուլկարլար-
տան 60 քիշիլ էքէրիոն չօճուգ
վէ գաւաթն էօլալարտիւքլէրիւնի
վէ 7 քիշի Էտրէլէտիքլէրիւնի
թաւաթիւ իտէրլէր :

—Չէլթուլտա վէ ճիւլարտա
թիւրք հիւքիւլէթի վաւաթը
թիւրքընա օլարապ Էրմէնիլէրի
լաւաթաթանէ սուրէթտէ Էզմէքտէ
օլտըլը վէ Մարաշտա պուլընան
ֆրանսիոյ գօնոթուլը միւնաթիւթ-
տէն աճիլ պուլընալը պիւլտի-
րիլլիլլըր :

Թիւրք հիւքիւլէթի պու հա-
րէքէթի իւլէ Չէլթուլըլարըն
սապընը գաթ իթմէք վէ հիւ-
ճուլա վէսիլէ պուլմաթ իթմէյօր
իտէտէ, մաճէլիւն էրմէնիլէրի չիւ-
տիլիք սապը ու սէպաթլէ հէր
լուլաւա պաշ էրմէլէ տէվալ ի-
տէյօրլար : պապալըմ պուլնուս սօ-
նու նէ՞րէյէ վարաճապ . . .

Տ Ա Ի Ի Ի Է

Ֆէլաթիթլու Բրէնա Ֆէրտի-
նանըն Ռօմաւա քէմալը թա-

լիլլէ գրալտան վէ վիւքէլաւան
գապուլ օլընմաթը մուճիպի մէմ-
նուսիլլէթ օլտըլը կիպի, հիւ-
քիւլէթի հազըրէնին միւրէլլի-
ճի էքքաթը [օրկան] աւտ օլը-
նան նօլի վէք նամ Սօֆիա կա-
գէթաթը Բրէնան Էվրօթա բաթ-
թալալարընա հիւանի գապուլ
պուլմուշ օլմաթընը զուրուլլէ
լիքը իթմէքտէ տիւր :

Բրէնան շու սօն սէյաճաթլա-
րը Մաքէթանիա իչիւն Ինկիլ-
թէլաւըն թէրթիպ իթմիշ օլտը-
լը իսլաճաթ ճէտլէլիւն ինքա-
ւընա տէվլէթլէրիւն իթթիֆա-
գընը էլտէ իթմէք մապստիւն-
տէն նաշի զանն օլընըյօր : «Նօ-
վի վէք» տաթի Մուրցաթէք ճէտ-
վէլիւնին սէմէրէպալիշ օլմա-
յաճալընը թէճըրկալէսի կէօ-
րիւլտիկիւն պէյանլէ, հէր հալ-
տէ տաճա կէնիշ վէ գօնթօլ
թաճիլընա իսլաճաթ իգթիլլա
օլտըլընը իտաւա իտէյօր :

—Բալար սապաճը չէնիլիլ
պէլէտիլէ մէյաւանընա պէօյիլ
պիւր միթիլիլ թէճէմիւն օլընմը
լտը : Իրաւը նուլթգ իտէն զէ-
վաթ Մաքէթանիա Ռուս չէ-
թալարըն պուլկար քէօյլիւլէրի
իւզէրիւնէ գաթլ ու մէզալիլ ին-
քաւընա պուլընալարընտան
պաճիլէ : Ռուլարա թէճիտ օլ-
մաթ իւզըն «պիլիտէ պուրաւա
Ռուլարա գարըն թէզիգաթ ին-
քաւընա մէճպուր իտէճէքլէր»
կիպի միւքալէմէլէրտէ պուլըն-
տըլար, վէ նիհայէթ Եոնան վէ
թիւրք հիւքիւլէթլէրիւն իթթար
Էօլլու մուսսիւր միւրաճաթլար
իթմէք իչիւն պուլկար հիւքիւ-
լէթիւնէ իսթիտա թապտիլիւնէ
գարար վէրուլլէր :

Ր Ո Ւ Ս Ի Ա

Կովկասիա աւըլաւալէկան րուս-
սաւընտան Բրէնա Մէլիքով Ջա-
րըն հուզուրընա գապուլ օլըն-
մուշ վէ իսլաճաթըն լիւզուլիւնի
արլ իթմիշ տիւր : Քէզա խէնսի
միւլարիլէ հիւքիւնի քիլիսէլէրիւն
էմալք վէ սէրվէթիւնին իտտէ
օլընմաթընը իգթիլլաւընտան
տաթի Ջարա պաճա էթմիշ տիւր :

—Ռուս Սիսակըն թալէպի իւ-
լէրիւնէ՝ Բաթրիկ ինթիլապը
վէ քիլիսէ իսլաճաթը իչիւն
Ջար մէճիլի Ռուսանի տալէթ
իթմիշ իտտէ, շու սըրա քիլիսէ
իչիւն իւլէմէշլուլ օլմալաճալը-
նը վէ միւնաթիւ պիւ վազըլթաւ
պապաճալընը վաւ իթմիշ տիւր :

Բէթէրպալիկ մէթրաթիտի
րաթրիքիլէ նաւիլէտ կէօթէ
րիլլիլլըն նալէհան պու քիլիսէ վէ
բաթրիք մէսէլէսիւնին մէյաւ-
նա աթըլմաթը Ռուս քիլի-
սէլէրիւնին միլիարլարճա օլան
սէրվէթիւնի մուճաթէպէյէ թաթի-
սիւ իթմէք մապստիւնէ հալ օ-
լընըյօր : Մաճուր Բօրիթտանլէվ
պու էքքեաթա մուլալիլ օլուպ

Իսթիֆա իթմէք իսթմիշ տիւր :
Ջար տաթի մէսէլէի թէճէթիւր
իթմէք վաւը իւլէ անը շալի
իթմիշ տիւր :

—Հէրսէքթօրա իչիւն իչիւն
մալիշաթաւա պուլընալար վէ
պանաթրալար չէքէրէք գանուր
էսասի թէճէթիւնի իտաւա իթ-
տիլէր :

—Եղիսապէթուպուտա գարը-
նըզըզըլար զուհուր իթմիշ, հէա-
լի պօմպալարլէ հիւքիւլէթ պի-
նալարընը վէ թէլէկրաֆլարը
պօլմաթ թէճիտիւնէ պուլընմըշ :
Շըմէնտըքէր մէմուրլարընտան
1000 քիշի թաթիլի մէշլուլիլէթ
իտէրէք թըրէն թաթիլ օլմուշ :

—Բէթէրպալիկա իչիւն իչիւն
թալէպի իւլէ Բուլթիլլ ֆապրի-
գաւը թէքքար գաբանմըշ տըր :

—Կըրալ-Վէքիլի (փոխարքայ)
իւլէվանը իւլէ կովկասիալա Էնի
թալիւն օլընան Բրէնա Վարանցով
Տաշքով պիւր պէյաննամէ նէշրի
իւլէ չէնիլլէրիւն աւըլաւալէկանը
վէ Ռուսանիլէրի մէճիլիսէ տալէթ
իտէրէք, Կովկասիաւա աւալիշ վէ
աւալէթիւն թէճէմիւնի իչիւն իթ-
թիլապ օլընմաթը լալըմ կէլէն
թէպալիլլէր վէ գէմաթվօլար ի-
չիւն միւլէքէրէ իտիլմէսիւնի էմր
իթմիշ տիւր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Կէշէն կիւնլէր Ալման վէ Ռուս
մէնպալարընտան նէշաթ իտէն
պալը թէլէկրաֆլար Ռուս վէ
ճաթօն տօնանմալարըն վուրուշ-
մուշ վէ 4—5 տտէտ ճաթօն սէ-
ֆիւնէլէրիւն զարպ օլմուշ օլտըլ-
լարընը պիւլտիթիլլէր իտի : 2—3
կիւնտէն պէրու վիրուտ իտէն
թէլէկրաֆլար հէր թարաֆտան
մէշքիւր հալմաթիւ թէքիլպ
իթմէքտէ տիւրլէր :

—Պու կիճէ ալընան թէլէկը-
րաֆ պիւր Ռուս տօնանմալընը
Սիսակ սէվաճիլիտէ Գաւրան
քէթօրքէլիւնտէ պուլընալընը
պիւլտիլլիլլըր :

Տիկէր պիւր թէլէկրաֆ Ռօմ-
տէսլվէնաքիւնին տօնանմալըն Ա-
նաթ սաճիլլէրիւնտէ քէօմիւր ալ-
մալլէ մէշլուլ օլտըլընը պիւ-
տիլմիշ տիւր :

—Ճաթօն վէ Ռուս տօնանմա-
լարն Էա ֆօրմօզա վէ Էաթաթ
Ֆիլիլլիւն աւալարըն սուլարընա
վուրուշաճալարըն հէսապ օլընը-
յօր :

—Մանչուրիաւաքի իչիւն իչիւն
Ռուս օրտուսընըն Էնի գօման-
տանը ժէնէրալ Պաթիլիլլ Բէ-
թէրպալիկաւա Մանչուրիալա
միլէթվէտիւնի Էօլա չըգմըշ
տըր :

—Պալթիկ տօնանմալընտէօր-
տիւնի ֆիլլուր էլան Էօլա չըգա-
մալըն տըր :

—Ռօմտէսլվէնաքիւնին տօնան-
մալըն հէր նէ սէպէպլէ իտէ իքի
գըմա թապսիլ օլընուպ, պիւր

գըմը Անամպա աւալարընա
Էազըն վէ տիկէր գըմըն Ժալա
աւաթ սուլարընա պուլընալը-
նը պիւլտիլլիլլէր իտի :

Ամիւրալ Ռօմտէսլվէնաքի գուլ-
վէթիւնի իքի գըմա թապսիլ
իթմիշ օլմալընտան տօլալը մուս,
իտէք օլընըյօր :

—Մանչուրիա օրտուկէալա-
րընտան վէրիլէն հալաւաթ
Էալընըզ պալըն Էնէմիլէթսիլ վէ
ուլապ միւնաթէմէլէրտէն իպա-
րէթ տիւր :

Թ Ի Ի Ճ Ա Ր Ի Յ Է

ՎԱՌՆԱ,	Ապրիլ 6
ՉԱՆԻՐԷ	
ՊՈՒՂՏԱԹ	
Վալիւն	54-60 լիպ. 9.50 / 11.60
Արապա	52-62 լիպ. 9. / 12.
ԱՐԲԱ	
Վալիւն 100 քիւլ	11. / 11. 20
Արապա 42-45 լիպ.	6. / 6. 60
ԵՌԻՎԱՆԱՐԱՊԱ 33/36 լիպ.	5. 20/5.70
Վալիւն 100 քիւլ	10. 60/10. 75
ՖԱՍՈՒԼԵԱ	100 քիւլ - 25--27
Արապա 100 քիւլ	22--24
ՏԱՐԸ	արապա հէթթ. 14--15
ՔՕԼՕՁ	արապա 55-60 լիպ. 10. 50/12
ՄԻՍԻՐ	57-58 լիպ. 7. 20/8. 80
«	100 քիւլ 11. 20 11. 90
ՉԱՎՏԱՐ	արապա 7 70 / 8. —
«	100 քիւլ 11. / 11. 50
Կիւնտէ 15 - 20 վալիւն վէ 80	— 100
արապա կէլմէքտէ. վալիւն մուլմէլէսի	
նաթօլէն 20 քիւլ. արապա մուլմէլէսի	
նաթօլէն 20. 20 :	

ՍԱՐԱՅԻԹԷ

Նաթօլէն 20, 20 քիւլնա
Օսմ. լիւրար 22, 75 ալթուս ֆրանք

ՊԻԳԱԼԻՅԷ

Վարնա քիւլաւաթա պապալիլլէ	
մալլէլիւն պու կիւնքի ֆիլաթը, ալթուս	
ֆրանք իւլէ :	
ԳԱՀՎԷ	1,95/2 10
Շէֆէր նէմիլ	80
Շէֆէր քէմիլ] սանաթ	41.
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուլալը	45 .
» Ճաթօն »	35 .
» Ինկիլիլ »	28.50
» Բիլլի »	50
ԿԱԶ, սանաթը	9. 40
Չէթիլի Էալը քիւլ	85.—1
ԳՈՒՐՈՒԼԷԼԻԼ	25

Է Օ Ռ Օ Բ Է Ն

Ֆրանսիական միջազգային շաքաթա-
քիւր
Նշանաւոր գրապէսնիւր իտմիլ
վարչութեամբ հրատարակուող այս շա-
քաթաթիւրը կը պաշտպանէ բոլոր հա-
րաւահարուող ժողովուրդներու իրաւու-
թը լուրջ և բազմակողմանի հմտու-
ղթեամբ բուլաւ յօգուածներով :
Գրին տարեկան 15 և վեցամսեայ
8 ֆր. :
Խնդրողին իբր նմոշ. օրինակ մը
ձրի կը զրկէ :
Հասցէն
Վալիւն իւլէն «Էօթթէկէնի»
24 Տօֆին փողոց
ԲԱՐԻՉ 6 րդ.

Ա Զ Դ

Տ. Տօք. Թորոսեան վերջնականա-
պէս քաղաքա հաստատուած լի-
նելով, կրնողունի ամէն տեսակ հի-
ւանդներ կէսօրէն վերջ ժամը 2 էն
մինչև 4 :

Տունավաքա փողոց ԲԻԼ 3

Одговорились А. Курбетиянъ

печатьница П. Глушковъ и С.не—Варна